

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՄՄՀ ռեկտոր

_____ Դ. Ս. Գաբրիելյան

«21» փետրվարի 2013 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Քննարկվել և ընդունվել է ՄՄՀ գիտխորհրդում

(արձանագր. թիվ 40 «21» փետրվարի 2013 թ.)

ՄՄՀ Ուսանողական գիտական ընկերության նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

Այն իրականացնելու համար ՈՒԳԸ-ն գործունեություն է ծավալում մի շարք ուղղություններով.

- գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում,
- ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և այլ գիտական ու կրթական միջոցառումների կազմակերպում՝ դրանցում ընգրկելով նաև արտահամալսարանական գիտական ներուժը,
- ուսանողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում,

- համալսարանական երիտասարդական գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործում և առկա բազայի մասին տեղեկատվության համակարգում,
- աջակցության ապահովում շնորհաշատ ուսանողներին և ասպիրանտներին,
- գիտական խմբերում և գիտական ծրագրերում ուսանողների ներգրավում,
- այլ գիտական կենտրոնների հետ կապի հաստատում և տեղեկատվության փոխանակում:

Գիտական խորհուրդ

ՄՄՀ ՈԻԳԸ ղեկավար մարմինը Ուսանողական գիտական ընկերության գիտական խորհուրդն է, որի կազմի մեջ են ՈԻԳԸ նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, ֆակուլտետների ՈԻԳԸ նախագահները: ՄՄՀ ՈԻԳԸ գիտական խորհուրդը քննարկում և որոշում է ՈԻԳԸ-ի գործունեության կարևորագույն ուղղությունները, մշակում է Ընկերության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, հաստատում և կոորդինացնում է ֆակուլտետային ՈԻԳԸ-ների աշխատանքները և ծրագրերը, վավերացնում է Ընկերության անունից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը:

Նախագահ

ՄՄՀ ՈԻԳԸ նախագահը հաստատվում է ՄՄՀ գիտական խորհրդի կողմից, երեք տարի ժամկետով՝ ՄՄՀ ռեկտորի ներկայացմամբ: ՄՄՀ ՈԻԳԸ նախագահն ի պաշտոնե ՄՄՀ գիտական խորհրդի անդամ է: Նա ներկայացնում է ընկերությունը, համակարգում է ընկերության գիտական խորհրդի գործունեությունը, ապահովում է ընկերության կառուցվածքային միավորների համագործակցությունը, տալիս է լիազորագրեր, ընկերության անունից կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր: Նա տարեկան հաշվետվություն է ներկայացնում ՄՄՀ գիտական խորհրդին:

ՈԻԳԸ նախագահի տեղակալին և քարտուղարին ՄՄՀ ռեկտորատի հաստատմանն է ներկայացնում ՈԻԳԸ նախագահը՝ ուսանողական բաժնի երաշխավորությամբ:

Նախագահի տեղակալ

ՄՄՀ ՈԻԳԸ նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում ստանձնում է նրա լիազորությունները, համակարգում է ՈԻԳԸ գիտական խորհրդի ստեղծած աշխատանքային օղակների գործունեությունը, հանդես է գալիս կատարած աշխատանքների մասին հաղորդմամբ:

Քարտուղար

ՄՄՀ ՈԻԳԸ քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները՝ առաջնորդվելով ՈԻԳԸ գիտական խորհրդի աշխատակարգով:

Ֆակուլտետների ուսանողական գիտական ընկերություններ

Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը ձևավորվում է ֆակուլտետի յուրաքանչյուր ամբիոնի կողմից ներկայացված առնվազն երկու ներկայացուցիչներից, ովքեր իրենց կազմից ընտրում են ֆակուլտետի ՈԻԳԸ նախագահ և քարտուղար:

Ֆակուլտետի ՈԻԳԸ նախագահը ՈԻԳԸ գիտական խորհրդի և ֆակուլտետի խորհրդի անդամ է:

Ֆակուլտետի ՈԻԳԸ-ն իր գործունեությունը կազմակերպում է ԵՊՀ ՈԻԳԸ Կանոնադրության, Աշխատակարգի և ՄՄՀ ՈԻԳԸ գիտական խորհրդի ընդունած որոշումների համաձայն:

Հանձնաժողովներ

ՄՄՀ ՈԻԳԸ գիտական խորհրդի որոշմամբ ձևավորվել են հետևյալ հանձնաժողովները՝

- Արտաքին կապերի հանձնաժողով
- Տեղեկատվական հանձնաժողով
- Աշխատակազմ

Աշխատանքային ժամանակավոր խմբեր

ՄՄՀ ՈԻԳԸ աշխատանքները պատշաճ կազմակերպելու և միջոցառումները համակարգելու համար ձևավորվում են աշխատանքային խմբեր, որոնց լիազորությունները դադարում են իրենց կոորդինացրած աշխատանքների ավարտից հետո: ՄՄՀ ՈԻԳԸ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և մասշտաբներն ընդլայնելու նպատակով ՄՄՀ ՈԻԳԸ նախագահի կողմից կարող են նշանակվել պատասխանատուներ: